

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-34.1-U2-15 Գլխավոր մասնագետ(2023-11-20)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն | Մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացման և բարեփարության հարցերով բաժին | Գլխավոր մասնագետ, (27-34.1-U2-15)

1.2 Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը կամ բարեփարության հարցերով կազմակերպիչը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փ. 130:

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է Նախարարությունում, նրան ենթակա պետական մարմիններում կադրային քաղաքականության առաջնահերթությունների սահմանման, այդ թվում՝ կատարողականների գնահատման, մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների վերապատրաստման կարիքների գնահատման, վերապատրաստման և ուսումնական ծրագրերի կազմման աշխատանքները.
2. իրականացնում է Նախարարության, նրան ենթակա պետական մարմինների ծառայողների պարտադիր վերապատրաստման (որակավորման) հետ կապված աշխատանքների կազմակերպման, հսկման և համապատասխան տեղեկատվական հարթակում վերապատրաստումների հաշվառման, վերլուծության և ամփոփման աշխատանքները.
3. իրականացնում է Նախարարության, նրան ենթակա պետական մարմինների ծառայողների գրանցում պաշտոնին հավասարագոր կամ առաջիադացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու կամ առեստավորման նպատակով վերապատրաստման աշխատանքների կազմակերպման և հաշվառուման աշխատանքները.
4. իրականացնում է Նախարարության, նրան ենթակա պետական մարմինների ծառայողների ատեստավորման նախապատրաստական և կազմակերպչական բնույթի աշխատանքները և անցկացման գործընթացը.
5. իրականացնում է օտարերկրյա պետությունների համապատասխան ուսումնական հաստատությունների հետ վերապատրաստման (որակավորման) աշխատանքները.
6. իրականացնում է Նախարարության, նրան ենթակա պետական մարմինների ստորաբաժանումներից ստացված կիսամյակային և տարեկան հաշվետվությունների հիման վրա գործընթացի վերլուծության և հաշվառման աշխատանքները.
7. իրականացնում է ծառայողների յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ գնահատված կատարողականների արդյունքների ամփոփման և համապատասխան տեղեկատվական հարթակ մուտքագրման աշխատանքները.
8. իրականացնում է Նախարարությունում, նրան ենթակա պետական մարմիններում առաջին անգամ պաշտոնի նշանակված, Նախարարության ուսումնական հաստատություննը ավարտած ծառայողների մասնագիտացման դեկալիաման աշխատանքների կամ փորձաշրջանի կազմակերպման աշխատանքները.
9. իրականացնում է պետության կողմից ուսման կամ վերապատրաստման համար կատարված ծախսերի փոփոխության պարտավորություն ունեցող և ծառայությունից ազատված անձանց վերաբերյալ սահմանված ժամկետում համապատասխան ստորաբաժանմանը անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման աշխատանքները.
10. իրականացնում է ծառայողների ծառայողական պարապմունքների կազմակերպման և հսկման աշխատանքները.
11. իրականացնում է Նախարարության ուսումնական հաստատություն ծառայողների ընդունելության գործընթացի, ինչպես նաև ուսումնառության հետ կապված այլ գործընթացների կազմակերպման աշխատանքները.
12. իրականացնում է Նախարարությունում, նրան ենթակա պետական մարմիններում ծառայության անցնող քաղաքացիների Նախարարության ուսումնական հաստատությունում պարտադիր նախնական-

- մասնագիտական ոլորտային կրթության գործընթացի կազմակերպման և հսկման աշխատանքները.
13. իրականացնում է ծառայողներին Նախարարության ուսումնական հաստատություն և այլ ուսումնական հաստատություններ ընդունվելու ուսման թույլտվության, ինչպես նաև ուսումնական արձակուրդի տրամադրման վերաբերյալ իրամանների նախագծերի նախապատրաստման աշխատանքները.
 14. իրականացնում է ծառայողներին Նախարարության ուսումնական հաստատությունում ուսումնառության վերականգնելու և նախկին տարիների շրջանավարտների պետական ատեսավորման վերահանձնմանը մասնակցելու գործընթացի կազմակերպման աշխատանքները.
 15. իրականացնում է Նախարարության ուսումնական հաստատությունում և Հայաստանի Հանրապետության այլ ուսումնական հաստատություններում ծառայողներին համատեղության կարգով դասավանդելու գործընթացի կազմակերպման աշխատանքները.
 16. իրականացնում է Նախարարության ուսումնական հաստատության սովորողների՝ Նախարարության, նրան ենթակա պետական մարմինների կառուցվածքային ստորաբաժնումներում կազմակերպվող ու անցկացվող ուսումնական և արտադրական պրակտիկայի նկատմամբ հսկողության իրականացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների և Նախարարության միջև կնքված պայմանագրերի հիման վրա համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկան Նախարարության, նրան ենթակա պետական մարմինների կառուցվածքային ստորաբաժնումներում անցկացնելու գործընթացի կազմակերպման և հսկման աշխատանքները.
 17. իրականացնում է Նախարարության, նրան ենթակա պետական մարմինների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող հայտարարատու անձանց վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու գործընթացը:

Իրավունքները.

- պահանջել և ստանալ քաղաքացիական ծառայողներից ընտրել համապատասխան տեղեկատվական հարթակում մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների վերապատրաստման կարիքները.
- պահանջել և ստանալ քաղաքացիական ծառայողներից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնելու գնահատված կատարողականները.
- Նախարարության և նրան ենթակա մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր ծառայողներին գրադարադար պաշտոնին հավասարազոր կամ առաջիադացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու նպատակով.
- պահանջել և ստանալ ուսումնական հաստատություններից Նախարարությունում պրակտիկա անցնող ուսանողների տվյալները, պրակտիկայի թեմաները.
- պահանջել և ստանալ նախարարության և վերապատրաստում անցնող ծառայողի միջև կնքվող ուսման կամ վերապատրաստման համար պետության կատարած ծախսերի փոխհատուցման պայմանագրերի կնքման անհրաժեշտ պաստաթյուրը.
- պահանջել և ստանալ ծառայողների և քաղաքացիական ծառայողների համար նախարարության ուսումնական հաստատությունում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների կազմակերպման և դրանց անցկացման անհրաժեշտ նյութեր և փաստաթյուրեր.
- ներգրավվել միջազգային ու հասարակական կազմակերպությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գերատեսչությունների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ մասնագիտացման և կրթական ոլորտին առնչվող աշխատանքային բնարկումներին.
- ներգրավվել շրջանավարտներին պաշտոնների նշանակման հետ կապված քննարկումներին.
- իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման համար նախարարության ուսումնական հաստատության, նախարարության կառուցվածքային ստորաբաժնումների դեկավաներից կամ աշխատողներից պահանջել կարծիքներ, գեկուցագրեր, աշխատանքային ծրագրեր, հիմնավորումներ և այլ փաստաթյուրեր:

Պարտականությունները.

- քաղաքացիական ծառայողով վերապատրաստման կարիքների գնահատման հիման վրա կազմված անհատական ծրագրերը, տվյալները մուտքագրել համապատասխան տեղեկատվական հարթակ.
- ներկայացնել ամփոփ տեղեկատվություն Բաժնի պետին կոմպետենցիաների վերապատրաստման կարիքների գնահատման արյունքների վերաբերյալ.
- հավաքագրել, ամփոփել և Բաժնի պետին ներկայացնել քաղաքացիական ծառայողների կողմից ներկայացված կիսամյակային կատարողականները.
- կատարել ծառայողների ատեսատվորման նախապատրաստական և կազմակերպչական բնույթի աշխատանքները.
- կազմել ատեսատվորմանը մասնակցող ծառայողների անվանացուցակներ՝ ատեսատվորմանը մասնակցելու վերաբերյալ կարդային ստորաբաժնումուն հաշվառվող պարտադիր ատեսատվորման ենթակա ծառայողների ցուցակների հիման վրա.
- ատեսատվորման արձանագրության, ինչպես նաև գրավոր երգակացությունների պատճենների ներկայացնել Բաժնի պետին համապատասխան կառուցվածքային ստորաբաժնումների պետերին և Նախարարության ֆինանսների կառավարման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժնում հավելավճար հաշվարկելու կամ հավելավճարի վճարումը դադարեցնելու նպատակով.
- նախապատրաստել նախարարության և վերապատրաստում անցնող ծառայողի միջև կնքվող ուսման կամ վերապատրաստման համար պետության կատարած ծախսերի փոխհատուցման պայմանագրերի նախագծեր,

- ինչպես նաև ուսումնական արձակուրդի տրամադրման վերաբերյալ հրամանների նախազծեր.
- ներգրավվել Նախարարությունում առաջին անգամ կրտսեր և միջին խմբերի պաշտոնների նշանակված, Նախարարության կրթահամայիրում առկա ուսուցմանը ավարտած պաշտոնի նշանակված ծառայողների մասնագիտացման դեկավարման աշխատանքների կազմակերպման գործնկացման համար նշանակված ծառայողներին.
- ստորաբաժանումներին ցուցաբերել գործնական և մեթոդական օգնություն ծառայողական պարապմունքների կազմակերպման նպատակով.
- ուսումնապիրել օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններից ստացված վերապատրաստման, որակավորման բարձրացման թեմաները, ներկայացնել հայտեր, պատրաստել գործուղման նյութեր և ուսման թույլտվություն տալու վերաբերյալ եզրակացություններ.
- պատրաստել գրություններ՝ տեղերում ծառայողական պարապմունքների օրերի և ժամերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով.
- ամփոփել առաջարկությունները և կազմել ծառայողական պարապմունքների ընդհանուր թեմաների օրինակելի տարեկան թեմատիկ պլանը.
- պատրաստել եզրակացություններ ստորաբաժանումներից ստացված միջնորդությունների քննարկման, դրական արդյունքների դեպքում ուսումնական հաստատություններում հետազա ուսումնառությունը շարունակելու թույլտվություն տալու վերաբերյալ:

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կաղըերի և մասնագիտական կողմնորոշման բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Ընհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
 - Խնդրի լուծում
 - Հաշվետվությունների մշակում
 - Բարեվարբություն
 - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
 - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
 - Փոփոխությունների կառավարում
 - Բողոքների բավարարում
 - Ժամանակի կառավարում
 - Փաստաթղթերի նախապատրաստում

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և դեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4 Ծփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: